

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ԵՐԿՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ
ԳՐՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐԺԵՔԸ**

Կ. Ա. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Հովհաննես Սարկավագի (XI—XII դդ.) գրական ժառանգության ուսումնասիրությունը հայագիտության կարևոր խնդիրներից է:

Սարկավագի անունով մեզ են հասել բազմաթիվ աշխատություններ, որոնք վերաբերում են գիտության դանադան բնագավառներին, սակայն հայագետները մինչև այժմ վերջնականապես չեն ճշտել այն երկերի ցանկը, որոնք անվիճելիորեն պատկանում են հայ մտածողի գրչին: Բացի այդ, Սարկավագի մի շարք գրվածքներ, որոնք հիշատակվում են հետագա շրջանի հայ պատմիչների կողմից, առայժմ անհայտ են, և ամեն մի նոր փաստ կօգնի հեղինակի անձնավորության բնութագրման գործին և լրացուցիչ լույս կսփռի նրա աշխարհայացքի վրա:

Մխիթար Այրիվանեցին, անդրադառնալով Սարկավագին, վկայակոչում է, որ նա արտագրել, սրբագրել, խմբագրել և մեկնաբանել է հին աշխարհի մտածողների մի շարք դործեր, դրանք մատչելի ու հասկանալի դարձնելով հայ հասարակությանը (Փիլոն, Գրիգոր Նյուսացի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Աստվածաբան և այլք)¹: Սակայն այս աշխատությունների ճնշող մեծամասնությունը մնում է մեզ անհայտ:

Մատենադարանի № 5596 ձեռագրում առկա է «Լուծումն բանիցն Աստուածաբանի Սարկաւագին» աշխատությունը (էջ 98բ—211բ), որը հիմնականում մեկնողական բնույթի է և վրիպել է հնումադոստոսների ուշադրությունից²:

Վերնագրից բացի, որը պարզ ցույց է տալիս, որ «Լուծումն»-ի հեղինակը Սարկավագն է, կարելի է առաջ քաշել ևս մի փաստարկ: «Լուծումն»-ի բնագրի և ստուգապես Սարկավագին պատկանող «Նորին յայտարարութիւն դանադան հերձուածոց յայլ և յայլ ժամանակս յարանց բղջախոհաց»-ի³ հա-

¹ «Մխիթարաւ Այրիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական», ի լոյս ընծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1867, էջ 33, 35—36: Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 582, էջ 39ա—40ա, № 1723, էջ 39բ—40բ: Այս մասին տե՛ս նաև՝ Գ. Ա. Իշան, Յուշիկը հայրենեաց Հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1870, էջ 287, ուր հենվելով Այրիվանեցու տվյալների վրա, հեղինակը գրում է. «Ասոր պէս (Դավիթ Անհաղթի աշխատությունների—Կ. Մ.) ըրած էր ուրիշ մեր նախնեաց թողած ամեն դժուարիմաց և խրթին զրոյց այլ՝ զոր անոք գրեանք կու կոչեն մեր բանասէր վարդապետք, այսինքն բարակ գրուածք: Եթէ այն գրոյց Լուծումն գրող այսինքն մթին բանից մեկնութիւն, առաջին ինքն չեղաւ, զոնէ իր աշակերտներն եղած են նախ, և յետոյ այլք» (էջ 287—288):

² Սարկավագի «Լուծումն»-ը հայտնի է մեզ միայն այս ընդօրինակությամբ: Մատենադարանի «Յուշակ ձեռագրաց»-ի կաղմողներն այս ձեռագրին նվիրված հոդվածում Սարկավագին են համարուի միայն «Եւագրեն ի բանից սուրբ վարդապետին [որ] Սարկաւագ կոչեց» խորագրով գրությունը («Յուշակ ձեռագրաց», հատ. 2, Երևան, 1970, սյուն. 142):

³ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6453, էջ 197ա—208ա, № 2731, էջ 221բ—235ա:

մեծատույժյունը ցույց է տալիս, որ «Լուծումն»-ի հեղինակը նույնպես Սարկավազն է: Այդ մասին հն վկայում նաև ստորև բերվող հատվածները:

«Լուծումն բանիցն Աստուածաբանի Սարկաւագին»

Հովհաննես Սարկավագ «նորին յայտարարութիւն...»

«Եւ ես գոչեցից: Նա յանապատէ և ես Բահանայապետի որդի: Եւ ես: Անմարմինն մարմնանայ: Ըստ Յոհաննու բանն մարմին լինի: Բանն քանձաւնայ: Տեսանելի լինի և շաւշափելի» (ձեռ. № 5596, էջ 99բ)⁴:

«Լուռ Աստուածաբանին Գրիգորի՝ անմարմինն մարմնանայ, բանն քանձաւնայ, անշօշափելին շօշափի, անժամանակն սկսանի, անտանելին տարեալ լինի, որդին որդի լինի...» (ձեռ. № 6453, էջ 205ա):

«Լուծումն»-ը արևելյան քրիստոնեական եկեղեցու հայրերից մեկի հայտնի ձառի, այն է՝ «Ճառ Գրիգորի Աստուածաբանի ասացեալ ի սուրբ ծնունդն Քրիստոսի և ի սուրբ կոյսն Մարիամ» երկի մեկնությունն է: Բերենք Սարկավազի «Լուծումն»-ի և Աստվածաբանի ձառի սկզբնամասերը.

«Լուծումն բանիցն Աստուածաբանի Սարկաւագին»

Գրիգոր Աստվածաբանի «Ճառ ի սուրբ ծնունդն Քրիստոսի...»

«Քրիստոս ծնեալ: Հայրական ծրնունդն: Լինի: Ի կուռէն ծնունդն փառաւորեցէք արդար և առաքինի վարուք: Քրիստոս յերկնից: Անմարմին վարուք հանդիպեցարուք: Քրիստոս ի վերայ երկրի...» (ձեռ. № 5596, էջ 98բ):

«Քրիստոս ծնեալ լինի. փառաւորեցէք: Քրիստոս յերկնից, հանդիպեցարուք: Քրիստոս ի վերայ երկրի. բարձրացարուք: Երգեցէք տեառն ամենայն երկիր»⁵:

Սարկավազի «Լուծումն»-ը ներկայացնում է որոշակի տեսական հետաքրքրություն: Այսպես, ձեռագրի 106ա էջից մինչև 107ա էջը շարադրված է աշխարհի շորս տարրերի մասին ուսմունքը. «Զմտաւ ած զգալի աշխարհի շորից նիւթոց և այս է յերկնէ և յերկրէ և որ ի մէջս են. երկիր և ջուր և ի միա-

4 Ընդգծումները մերն են: «Նա յանապատէ և ես Բահանայապետի որդի»: Այս նախադասությունից պարզ երևում է, որ խոսքը վերաբերում է Աստվածաբանին և հեղինակին՝ Սարկավազին, որովհետև «քահանայապետ» բառը ունեցել է նաև «քահանա» իմաստը: Իսկ մեղստույզ հայտնի է, որ Հովհաննեսի հայրը քահանա է եղել (տե՛ս Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասիրի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 119): Մեր կողմից նշված փաստերի հիման վրա «Լուծումն»-ի հեղինակային պատկանելության հարցը կարելի է համարել լուծված:

5 Աստվածաբանի ձառերի ռուսերեն թարգմանության մեջ այս ձառը վերնագրված է՝ «На святую Пасху». Свѣтъ Творения святых отцов, т. 4, М., 1844, էջ 152:

6 «Գիրք և ձառ հոգեշահ», Կ. Պոլիս, 1722, էջ 7 (այս ձառը, ըստ էության, Աստվածաբանի միակ գրվածքն է, որ հրատարակվել է հայերեն ամբողջությամբ): Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 866, էջ 6բ—17բ, № 2600, էջ 1ա—10բ և այլն: Հմմտ. Գ. Զարբհանալյան, Մատենադարան հայկական թարգմանությունների նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 351:

սին խառնումն չորից տարերցս. երկրի և ջրոյ. աւոյոյ և հրոյ»⁷: Յուրաքանչյուր տարր օժտված է երկու հատկություններով, որոնցից մեկը հիմնականն է՝ սկզբնականը, իսկ մյուսը՝ երկրորդական, տվյալ տարրին ոչ բնորոշ: Սակայն վերջինս իր հերթին հիմնական է մի այլ տարրի համար: «Երկիր ցուրտ է և ցամաք. ջուր ցուրտ է և խոնավ. աւոյ խոնավ է և ջերմ. հուր ջերմ է և ցամաք»⁸: Եվ երկրորդական հատկության շնորհիվ է հատկապես, որ տեղի է ունենում չորս տարրերի միացումն ու փոխարկումը. «...և խառնեալ են այսպէս: Երկիր ցամաքութեամբ ընդ հրոյ, իսկ ցրտութեամբ ընդ ջրոյ, ջուր ցրտութեամբ ընդ երկրի իսկ խոնաութեամբ ընդ աւոյոյ: Աւոյ խոնաութեամբ ընդ ջրոյ իսկ ջերմութեամբ ընդ հրոյ»⁹:

Սարկավագը բերում է տարրերի մի շարք որակական բնորոշումներ, տարբեր հարթությունների վրա. «Դարձեալ ունին և այլ երկուս որակութիւնս: Երկիր խիտ է և չոր, ջուր բուր է և գեղ. աւոյ խիտ է և շարժուն»¹⁰: «...և դարձեալ այլ որակ: Երկիր ծանր է և անշարժ. ջուր ծանր է և շարժուն. աւոյ թեթեւ է և շարժուն: Լուր սուր է և թեթեւ»¹¹:

Ամեն մի տարր, ըստ Սարկավագի, ունի իրեն հատուկ հատկություն, սակայն բոլոր տարրերը գտնվում են ներդաշնակության և փոխներգործության մեջ. «Իովելի ըստ իւրաքանչիւր բարի բնութեամբ. հուր՝ ջուրուցանելովն, աւոյ՝ տաճելովն, ջուր՝ զովացուցանելովն, երկիր՝ բուսովք. յամենեցունց յարմարութեանց և ձայնակցութեանց, իբր աղիք երգոց թոյլ և սլինդ գոլով: Այնպէս յարմարեալ են ծանրն ընդ թեթեւին... խոնաւն ընդ չորին, սուրն՝ բթին և անգայտն՝ խտին»¹²: Սարկավագի այս դատողությունները պարզ ցույց են տալիս, որ նա լավ ծանոթ է եղել անտիկ մտածողների՝ աշխարհի սկզբնատարրերի մասին ուսմունքին: Ներկա հատվածի կարևորությունն այն է, որ այստեղ տվյալ հարցի շուրջը Իմաստասերի արտահայտած մտքերն ավելի ծավալուն են: Մինչդեռ մեզ հայտնի նրա մյուս գրվածքներում դրանք կրում են հատվածական բնույթ և լիակատար ու հստակ պատկերացում չեն տալիս չորս տարրերի և նրանց փոխհարաբերության մեխանիզմի վերաբերյալ Սարկավագի հայացքների մասին¹³:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է մատնանշել Սարկավագի ևս մեկ աշխատություն Մաշտոցի անվան Մատենադարանի № 6017 ձեռագրից: Մատենադարանի «Յուցակ ձեռագրաց»-ում Սարկավագին վերագրված «Մեկ-

7 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5596, էջ 106ա:

8 Նույն տեղում:

9 Նույն տեղում, էջ 106բ:

10 Նույն տեղում:

11 Նույն տեղում:

12 Նույն տեղում, էջ 106բ—107ա:

13 Պետք է նշել, որ Սարկավագի աշխատության այս մասն այնուամենայնիվ տառապում է շարադրանքի ընդհատումներով և սեղմվածությամբ, իսկ երբեմն՝ տարրեր մտքերի և դատողությունների շփոթությամբ, անտրամաբանական ուղղվածությամբ: Այսպես, ձեռագրի 106բ էջում խոսվում է տարրերի որոշ հատկությունների մասին, իսկ երբ շարադրվում է միմյանց հետ նրանց կապը, երևան են գալիս այլ որակություններ՝ «Երկիր ծանր է և անշարժ, ջուր ծանր և շարժուն, աւոյ թեթեւ և շարժուն, հուր սուր և թեթեւ: Եւ խառնեալ են այսպէս. երկիր՝ ցամաքութեամբ ընդ հրոյ, իսկ ցրտութեամբ՝ ընդ ջրոյ...» (էջ 106բ): Այս. հանգամանքը, ըստ երևույթին, հնարագա գրիչների անփութության արդյունք է:

նութիւն տոմարի Հայկադունեաց» և «Հասն վերադրաց»¹⁴ երկերից բացի առկա են Սարկավազի ևս երկու աշխատություն, որոնք ունեն մի ընդհանուր խորագիր. «Յոհաննու քահանայի և իմաստասիրի, որ մականունն Սարկաւազ կոչի, ասէ ղգուշացուցանելով զմեզ»¹⁵ (էջ 190բ)։ Մեզ հատկապես հետաքրքրում է երկրորդ գրվածքը՝ «Յաղագս տարերաց բաղկացելոց յարարչէն» (էջ 193բ—196բ), որի համեմատությունը Աստվածաբանի վերոհիշյալ Հառի մեկնության հետ, ցույց է տալիս, որ այս աշխատության հեղինակը Սարկավազն է։

«Յաղագս տարերաց բաղկացելոց յարարչէն» (ձեռ. № 6017)

«Հուծումն բանիցն Աստուածաբանի Սարկաւազին» (ձեռ. № 5596)

«Եւ ի միասին խառնումն չորից տարերացս է սոսա։ Երկիր ցուրտ և ցամաք, ջուր ցուրտ և խոնաւ, օդ խոնաւ և ջերմ, հուր ջերմ և ցամաք։ Եւ խառնեալ է երկիր ցամաքութեամբն ընդ հրոյ, իսկ ցրտութեամբն՝ ընդ ջրոյ։ Եւ ջուր ցրտութեամբ՝ ընդ երկրի, իսկ խոնաւութեամբն՝ ընդ օդոյ։ Եւ օդ խոնաւութեամբ՝ ընդ ջրոյ, և ջերմութեամբ՝ ընդ հրոյ։ Եւ հուր ըստ մակդարձութեան և կամ մակբեկութեան ջերմութեամբ ընդ օդոյ միանայ, և ցամաքութեամբ՝ ընդ երկրի» (էջ 193բ)։

«... և ի միասին խառնումն չորից տարերցս, երկրի և ջրոյ, աւդոյ և հրոյ, երկիր ցուրտ և ցամաք, ջուր ցուրտ և խոնաւ, աւդ խոնաւ է և ջերմ, հուր ջերմ է և ցամաք։ ... և խառնեալ են այսպէս. երկիր ցամաքութեամբ ընդ հրոյ, իսկ ցրտութեամբ՝ ընդ ջրոյ։ Զուր ցրտութեամբ՝ ընդ երկրի, իսկ խոնաւութեամբ՝ ընդ աւդոյ։ Աւդ խոնաւութեամբ՝ ընդ ջրոյ, իսկ ջերմութեամբ՝ ընդ հրոյ։ Դարձեալ ըստ մակդարձութեան և կամ բեկութեամբ այսպէս միաբանեալ են. հուր ջերմ և ցամաք, ջերմութեամբ՝ ընդ աւդոյ միաբանեալ, իսկ ցամաքութեամբ՝ ընդ երկրի» (էջ 106ա—106բ)։

Աշխատությունը բաղկացած է փոքր ներածական մասից, որին հաջորդում է հիմնական բովանդակությունը։ Վերջինս հեղինակը շարադրում է հարց ու պատասխանի ձևով։ Սարկավազը տեսական դրույթները և դատողությունները փաստարկում է կոնկրետ օրինակներով՝ դրանք առավել մասշտաբի դարձնելու միտումով։ Տեքստն ունի զուտ բնափիլիսոփայական բնույթ։ Հեղինակը ամփոփում է անտիկ և միջնադարյան բնափիլիսոփայության ներ-

14 «Ցուցակ ձեռագրաց», հատ. 2, սյուն. 233։ Մենք այլ կարծիք ունենք առաջին աշխատության հեղինակային պատկանելության վերաբերյալ։

15 Մատենադարանի քարտարանի կադմոնները Սարկավազին են համարում նաև հաջորդ գրվածքը՝ «Սուղ ինչ յաղագս թէ որպէս գոյանայ հոգի մարդոյ» վերնագրով։ Սակայն այդ փոքրիկ աշխատությունը միջնադարյան մի այլ խոշոր մտածուի՝ Գրիգոր Տաթևացու մեծածավալ «Գիրք հարցմանց»-ի հատվածն է։ Առաջին աշխատության (աժամանակագրություն) համառոտ խմբագրությունը հրատարակել է Հ. Ոսկյանը («Սարկաւազ վարդապետին է բանս», «Հանդես ամսօրյա», 1925, էջ 238—239), ընդարձակը՝ Վ. Հակոբյանը («Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ., հատ. 1, Երևան, 1951, էջ 22—26) և Ա. Գ. Արրահամյանը («Հովհաննես իմաստասերի մատենագրությունը», էջ 131—134)։

կայացուցիչներին, մասնավորապես Արիստոտելի, դրույթները¹⁶ աշխարհի տաջացման պատճառների և սկզբնատարրերի մասին: Սարկավագն ի մի է բերում, համադրում նախորդների այն տեսակետները, որոնք ինքը համարում է ճիշտ, տալով դրանց դրական և աշատ շարադրանքը: Միևնույն ժամանակ միջնադարյան մտածողն այդ ամենը ենթարկում է իր նպատակներին և դատողությունների սեփական տրամաբանությունը: Կարծում ենք, որ այս գրվածքը նպատակ է ունեցել բարձրագույն դպրոցների համար ավելի մատչելի և հասկանալի դարձնել անտիկ դասական փիլիսոփայական ուսմունքները:

Հարց է ծագում, արդյոք Սարկավագը անմիջաբար է օգտվել Արիստոտելի և այլ մտածողների երկերից, թե՞ անհրաժեշտ գիտական տեղեկությունները ձեռք է բերել քաղելով հետագա աղբյուրներից: Դժվարանում ենք այդ մասին որևէ ստույգ և վերջնական կարծիք հայտնել, թեև գիտենք, որ Արիստոտելի և մի շարք մտածողների աշխատությունները թարգմանվել են հայերեն դեռևս V—VI դդ.: Կարծում ենք, որ այս աշխատությունը գրելիս Սարկավագը հիմնականում հենվել է Նեմեսիոս Նմեսացու (IV—V դդ.) «Յաղագս բնութեան մարդոյ» երկի վրա¹⁷: Սակայն Սարկավագը կուրորեն չի հետևում Նեմեսիոսին: Նարադրանքից պարզ երևում է, որ նա որոշակի խնդիր է դրել իր առջև՝ որոշ սահմաններում ի մի բերել տարրերի մասին նախկինում եղած ուսմունքները և ստեղծել ընդհանրացնող դասընթաց: Սարկա-

¹⁶ Օրինակ, խոսելով հոգու «տնական», «զգայական և բանական» մասերի միջև եղած որակական տարբերությունների մասին, Սարկավագը գրում է. «...և սոսա մի քան զմի բնքոշ և կակուղ ունի զմարմինն, եթէ զգայական և եթէ դրանական, և զայսպիսիս բնաւորականս անուանէ Արիստոտել» (ձեռ. N° 6017, էջ 194ա):

¹⁷ Մատենագիտության մեջ այս աշխատությունը հաճախ սխալմամբ վերագրվել է քրիստոնեական մեկ այլ մտածողի՝ Գրիգոր Նյուսացուն (IV դար): Նեմեսիոսի երկի հայերեն թարգմանությունը առաջինն անդրադարձավ Ա. Սուբրյանը («Բաղմավնայ», ԼԸ, 1880, Դ, էջ 326—340): «Ինքն Նեմեսիոս,— գրում է Սուբրյանը,— եպիսկոպոս կը կարծուի Նմեսու քաղաքին է գրեթէ ժամանակակից Նիսացուն, որով և Նեմեսիոս Նմեսու կոչուիլն և Նիսացի յորջորջումն բնական պատճառ մ'էր շփոթելու այս երկու անձինքն իրարու հետ: Սա իւր գիրքն կը մսկազրէ «Յաղագս բնութեան մարդոյ». իսկ Նիսացին կոչած է զիւրն «Մարդոյն կազմութիւն» (տե՛ս «Նեմեսիոսի մարդակազմութեան գրոց և անոր հայ թարգմանութեան ճաշակ մը», «Բաղմավնայ», 1880, էջ 326): Զվիճարկելով Սուբրյանին, մենք, այնուամենայնիվ, կարծում ենք, որ շեշտը պիտի դրվի հայադեռի փաստարկման երկրորդ մասի վրա: Հայ մատենագրության մեջ այս երկու վերնագրերը հաճախ են շփոթել, այսինքն՝ «Յաղագս մարդոյ կազմութեան» փոխարեն գրիչները ոգտագործել են «Յաղագս բնութեան մարդոյ» և ընդհակառակը: Ըստ երևույթին, այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ հայկական միջնադարում չէին զանազանում «բնութիւն» և «կազմութիւն» հասկացությունները: Բացի այդ, մենք ենթադրում ենք, որ Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» և Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» աշխատությունները չէ, որ շփոթվել են միմյանց հետ: Նյուսացուն են վերագրում ևս մի գրվածք, որի վերնագիրն է «Յաղագս բնութեան մարդոյն» (սկ. «Ի շորից դոյսցեալ ասի մարդ, զի շորը պատճառք է՝ եղելութեան»): Այսպես, Մաշտոցի անվան Մատենադարանի № 715 ձեռագրում առկա է որոշակի խորագիր՝ «Վասն բնութեան մարդոյն, մեծին Գրիգորի Նիսացուն համառօտեալ բաղդատարար» (էջ 179ր): Այս մասին տե՛ս նաև՝ «Հայկական մատենագիտություն», հատ. Ա, Երևան, 1959, սյուն. 71—72: Բովում է, որ հենց այս նույնատիպ վերնագրերով երկերն են, որ շփոթվել են իրար հետ: Սակայն պարզ է, որ այս ենթադրությունը չենք կարող հարցի վերջնական լուծում համարել: Անկասկած Նյուսացու և Նեմեսիոսի երկերի շփոթումն է պատճառը, որ Ալբրիվանցու բերած՝ Սարկավագին վերագրվող «նուրբ» գրքերի ստուգաբանությունների շարքում բացակայում է Նեմեսիոսի անունը, հակառակ նրան, որ Սարկավագը լայնորեն օգտագործել է Նեմեսիոսի երկը:

վագը՝ յուրօրինակ ձևով մեկնաբանում և շարադրում է այն տվյալները, որ քաղել է Նեմեսիոսը անտիկ փիլիսոփայական հրկերից։ Աշխատության մեջ ընդհանրապես, ինչպես նաև նրա յուրաքանչյուր հատվածում պարզորոշ նկատելի է համադրության, ընդհանրացման սկզբունքը։

Հովհաննես Սարկավազ. «Յա-
ղագս տարերաց բաղկացելոց
յարարչէն»

Նեմեսիոս. «Յաղագս բնութեան
մարդոյ»

«Խեցէմորթն, զի ծառ է հաստա-
տեալ ի վերայ քարի ի մէջ ծովու, և ոչ
շարժի ի տեղոջէ իւրմէ, և ունի զշօշա-
փականն, զի ի ջերմանալ արեգականն
բանայ զպատանեկունս իւր և ջերմա-
նայ և յառնուլ աղղելոյ շողոյն, ամ-
փոփէ զպատեանս իւր։ Նաև սպունկն,
որ ի ծովն կառուցեալ է ի քարն, և
յորժամ կամի որ հատանել զնա, փչէ
ընդդէմ մարդոյն, և ահա սոքա ըստ
անշարժութեան՝ տնկականացն են հա-
ղորդ, և ըստ շօշափականին, այլ զգա-
յութեանցն» (ձեռ. N° 6017, էջ 196ա)։

«Քանզի զխեցէմորթսն զեռունս, որ-
պէս զգայունս ծառս կաղմեաց, և ար-
մատացոյց զնոսա ի ծովու զօրէն
տնկոց և իբրև զփայտ եղ զխեցին
շուրջ զնոքօք, և կանգնեաց զնոսա որ-
պէս տունկս։ Եւ ետ նոցին զգայու-
թիւնս զշօշափականն՝ զհասարակացն
ամենայն կենդանեացն զգայութիւնն,
որպէս զի կցորդ լինել տնկոցն՝ ար-
մատանալովն և կանգուն կալով, իսկ
կենդանեացն՝ ըստ շօշափման. քան-
զի և սպունգն՝ որ արմատացեալ է ի
վէմս, և ամփոփիլ և քինախնդիր լի-
նել՝ յորժամ որ մատուցեալ շօշափի-
ցէ»¹⁸։

Սարկավազն իր աշխատության 195ա—195բ էջերում, ինչպես նաև նե-
բաժական մասում (էջ 193բ)¹⁹, բացահայտում է տարրերի միջև եղած ընդ-
հանրություններն ու տարբերությունները, տալիս նրանց «հաղորդութեան»
և «զանազանութեան» ծավալուն շարադրանքը։ Բացի այն զաղափարներից,
որ առկա էին Աստվածաբանի ճառի «Լուծումն»-ում, Սարկավազն այստեղ
զարգացնում է այլ մտքեր ևս, որոնք այնտեղ ի մի շեն բերված և դժվար է
դրանց հիման վրա որոշակի եղրակացություններ անել։ Ներկա աշխատու-
թյան մեջ միջնադարյան հեղինակի պատկերացումները բավական ստույգ
և ծավալուն են շարադրված։ Այսպես, «հոգն ունի անշարժութիւն, խտութիւն
և բթութիւն։ Իսկ հուրն ունի շարժութիւն, անգայտութիւն և սրութիւն։ Իսկ
զանազանի ջուր ի յօդոյ, զի ունի երկու որակութիւնս ի հոյ՝ զանգայտու-
թիւնն և զշարժութիւնն, և մի յերկրէ՝ զբրթութիւն։ Իսկ օդ ի հոգոյ՝ շարժու-
թեամբ, զիճութեամբ և անգայտութեա։ Եւ ունի երկու որակութիւնս ի հոյ՝
զանգայտութիւն և զշարժութիւն, և մի յերկրէ՝ զբրթութիւն»²⁰։ Տարրերը ոչ
միայն «զանազանին իրերաց», այլ նաև «փոխարկին ի միմեանս»։ «Հուր
ի բաց եղեալ զջերմութիւնն,— գրում է Սարկավազը,— լինի երկիր, և շիջեալ

¹⁸ «Նեմեսիոսի փիլիսոփայի նմեսացոյ յաղագս բնութեան մարդոյ», Վենետիկ, 1889, էջ 12—15։

¹⁹ Այս մասը, ինչպես արդեն նշվել է, համընկնում է Սարկավազի «Լուծումն բանիցն Աս-
տուածաբանի» հատվածի հետ։

²⁰ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N° 6017, էջ 195բ։

և ի բաց եղևալ ղչորութիւնն՝ լինի օգ...: Իսկ երկիր տղմացեալ՝ լինի ջուր...: Իսկ ջուրն ֆանձրացեալ և կաւացեալ՝ լինի երկիր...: Դարձեալ ջուր ջեռեալ և շոգացեալ՝ լինի օգ: Իսկ օգ ժողովեալ և խտացեալ՝ լինի ջուր...: Իսկ շորացեալ՝ ի հուր փոխարկի, իսկ ջեռուցեալ ջուր և շիջեալ հուր՝ օգ լինի»²¹: Հեղինակն իր մտքերը պարզաբանելու համար բերում է կայծակի, հեղեղի և այլ օրինակներ:

Չնայած տարրերը տարբերվում են իրարից, սակայն նրանց միավորութան շնորհիվ է առաջանում աշխարհի զանազանակերպությունն իր բոլոր ձևերով ու տեսակներով, այդ թվում և մարդը: «Ըստ բոլորին, բոլորովիմբ խառնին և միատրին ի միմեանս, և ապա բաղկացուցանեն զմարմին և առնեն այլ՝ քան ղինքեանս, զոմն քար, զոմն փայտ, զոմն եղն, զոմն մարդ»²²:

Հայ մտածողը մանրամասնորեն լուսաբանում է արիստոտելյան «գոյացական» և «պատահական» որակները²³ («существенные» և «случайные» качества), որ բացակայում են նեմեսիոսի մոտ: Այսպես, Սարկավազը հետևյալ ձևով է բնութագրում աշխարհի տարրերը. «նախ զի տարեալ են ընդ աշխարհ ամենայն: Երկրորդ՝ զի տարեալք են ի միմեանց, զի ի շորիցն զմինն զոր առնուս՝ այլքն ի նմա գտանին: Երրորդ՝ զի պարզ մարմինք նոցա տարեալ են յինքեանս զգոյացական և զպատահական որակսն»²⁴ (ընդգծումները մերն են—Կ. Մ.): Ուրեմն, աշխարհի փոքրիկ մասնիկները, իրենց ֆիզիկական էությամբ լինելով պարզ, օժտված են երկու տարբեր որակական՝ ատկություններով, այսինքն՝ ամեն մի օբյեկտ, նույնիսկ ամենատարակաւը, կարող է ունենալ տարբեր որակական բնութագրություն և դրսևորումներ: «Ի յերկիր,— գրում է Սարկավազը,— ցամաքութիւնն, որ է շորութիւն, գոյացական տեսակ է, և ցրտութիւնն՝ պատահական որակ: Եւ ի ջուրն ցրտութիւնն գոյացական տեսակ է, և գիճութիւնն՝ պատահական որակ...»²⁵: Այս որակները գտնվում են միաժամանակ և «պայքարի», և «ներդաշնակության» վիճակում: Ըստ որոշ որակների, նյութական մասնիկները «սիրելիք են» «անքակտելիք», իսկ ըստ այլ որակների՝ «թշնամիք անհաշտելիք»: «Ըստ գոյացական տեսակացն թշնամիք են անհաշտելիք, զի ցրտութիւնն ջրոյ՝ ջերմութեանն՝ հրոյ հակակայի, և շորութիւնն հողոյ՝ գիճութեան օդոյ: Իսկ ըստ պատահական որակացն, սիրելիք անքակտելիք են, զի թէ ոչ էր միջոց պատահական որակացն. անհնար էր սոցա սիրով հաղորդել միմեանց»²⁶: Այսպես, հենց «պատահական» որակների շնորհիվ է, որ հնարավոր է մի տարրից անցնել մյուսին: Իմաստասերը նշում է, որ տարրերը միշտ չէ, որ հանդես են գալիս պարզ ձևով, այլ հաճախ միջնորդավորված և այլափոխված են այնքան, որ մեր զգայություններն ի վիճակի չեն ճշտիվ տարբերել դրանք: «Անհնար է առանձնաբար երևիլ՝ վասն սաստիկ և խիստ միատրոթեանն, զի ոչ կարէ զգայութիւն ի քար և ի փայտ և յայլ ամենայն ինչ որոշել՝ թէ այս հող է, և այս՝ ջուր և այլն, զի թէպէտ զթանձրութիւնն հողոյն ասեմք և զմածոմն՝

21 Նույն տեղում, էջ 194ա—194բ:

22 Նույն տեղում, էջ 193բ:

23 Նույն տեղում, էջ 194բ—195ա:

24 Նույն տեղում, էջ 194բ:

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում, էջ 194բ—195ա:

ջրոյն, զշարժելն՝ օդոյն, և զերեւելն՝ հրոյն, բայց ոչ յատկապէս հողն իբրև զհող երևի, և ջուրն՝ որպէս զջուր»²⁷: Սարկավազը, հետեւելով Նեմեսիոսին, դրում է, որ մարդը կարող է ճաշակել տարրերը «անմիջաբար» և «միջնորդութեամբ»: «Անմիջաբար զջուր խմեմք և զօդս ծրծեմք և ի հուր ջերմանամք, և միջնորդութեամբ՝ ի յրմայել զգինիս, զի նա ջուր է, որակացեալ ի յորթոյ, և յուտելն զձէյ, և զամենայն ինչ, որ խոնաւ բնութիւն ունի, և զհուր՝ ջերմ կերակրոց միջնորդութեամբ»²⁸:

Աշխարհի տարրերի շարժումը նկարագրելիս հայ մտածողը շարունակում է արիստոտելյան ավանդույթները: Սակայն եթե Արիստոտելը նշում է տարածական շարժման երեք հիմնական ձևեր՝ 1. «բոլորապէս» («շրջանալին»), 2. «ուղղապէս» («ուղղաձիգ») և 3. այս երկու ձևերի համատեղում, ապա Սարկավազն բնագծում է առաջին երկուսը, ըստ երեւոյթին երրորդ ձևը ինքնուրույն չհամարելով: «Տարերքն... ունին... երկակի զկալմունս առ իրեարս, այսինքն՝ ուղղապէս ի վեր և ի վայր, զել և զէջն ունելով: Երկրորդ՝ բոլորապէս ըստ մակբեկութեան և մակդարձութեան...»²⁹:

Սարկավազը կանգ է առնում նաև կյանքի դրսևորման տաքեր ձևերի վրա: Այսպէս, «զգոլն միայն ունին անշունչք, իսկ զգոլն և զկեալն՝ տունկք, այլ զգոլն, զկեալն և զգալն՝ զգայական անբանք: Բայց զշորեսինն՝ զգոլն, զկեալն, զգալն և զիմանալն՝ մարդիկք բանականք»³⁰: Արտաքին աշխարհի գոյութեան դրսևորման ավելի պարզագոյն տեսակները համապատասխանաբար և անհրաժեշտաբար բովանդակվում են ավելի բարձր ձևերում: Սրանով իսկ Սարկավազը, ընդունելով հանդերձ կրօնական այն թեզը, թե մարդը, իբր, աստծո ցանկութեան արդասիքն է, փորձում է տեսնել ինչ-որ չափով նաև նրա առաջացման բնական ուղու գոյութիւնը³¹: Միջնադարի համար այս գաղափարները բավականին հետաքրքիր են: Բացի այդ, մարդը հանդիսանում է բոլոր արարածների «շաղկապը», «զի մարմնովն բնականացն է հաղորդ, և կերակրականան, սննդականան և աճողականան՝ տնկականացն, և զգայութեամբն՝ անբան կենդանեացն, և հոգևովն՝ իմանալեացն»³²:

Որոշ հասկացութիւններին Սարկավազը փորձում է տալ նաև որակական նոր երանգավորում: Այսպէս, օրինակ, եթե ըստ Նեմեսիոսի «զայլոց զլինելութիւնն՝ այլում ասպականութիւն՝ գոլ ասէ, և զայլոց ասպականութիւնն՝ այ-

27 Նույն տեղում, էջ 194ա:

28 Նույն տեղում, էջ 195ա:

29 Նույն տեղում:

30 Նույն տեղում, էջ 196ա:

31 Հոգևորական լինելով հանդերձ, Սարկավազը բնութեան զարգացման, ինչպէս նաև մարդու առաջացման հարցում հաճախակի ելնում է ոչ թե Սոբոր գրքից, այլ հին հունական հեթանոսական աղբյուրներից և հատկապէս Նեմեսիոսի երկից: Ահա թե ինչ է դրում վերջինիս մասին վրաց ակնավոր գիտնական Ի. Ս. Բերիտաշվիլին. «Նեմեսիոսի խոսքերով, մարդն առաջացել է կենդանիներից ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար: Նեմեսիոսը այս ամենը վերագրում է արարչին, այսինքն՝ աստծուն: Նրա կարծիքով այս օրգանական աշխարհը ստեղծվել է աստծո կողմից աստիճանաբար: Բայց հասկանալի է, որ աստիճանաբար զարգացող բնութեան արարիչ չի կարելի համարել քրիստոնեական կամ եբրայական աստծուն... Հետևաբար պարզ է, որ Նեմեսիոսը կրկնել է Արիստոտելի հանձարեղ հայացքը օրգանական բնութեան զարգացման վերաբերյալ և այդ բնական պրոցեսը արհեստականորեն վերագրել է աստծո ստեղծագործութեանը (տե՛ս «Учение о природе человека в древней Грузии (IV—XIV вв.)», Тбилиси, 1961, էջ 67): Այս եզրակացութիւնը վերաբերում է նաև Սարկավազին:

32 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N 6017, էջ 196բ:

լում լինելութիւն...»³³, ապա Սարկավազը սպլալ պրոցիսը քննարկում է «նորի» և «հնի» կատեգորիաների և նրանց փոխհարաբերութեան տեսանկյունից: Այն հարցին, թե «պիտ՞րդ մնան մշտնջենաւորապէս և տեկն առ ի յէրցս լինելութիւն, զի ոչ առաւելուն երբէք և ոչ նուազին», Սարկավազը պատասխանում է. «Զի նորոյն լինելութիւն ապականութիւն գործէ հնոյն, և ապականութիւն հնոյն լինելութիւն գործէ նորոյն: Եւ ըստ այսմ մնան մշտնջենաւորապէս, ոչ առաւելիալ և ոչ նուազեալ»³⁴:

Նկատենք նաև, որ Սարկավազը համեմատաբար հեռու է Նեմեսիոսի գրքի հալ թարգմանչի հունաբանությունից³⁵: Նա հիմնականում օգտագործում է հայկական տերմինները կամ գուցահեռաբար՝ հայկական և հունական:

ДВЕ ФИЛОСОФСКИЕ РАБОТЫ ОВАНЕСА САРКАВАГА И ИХ ЗНАЧЕНИЕ

К. А. МИРУМЯН

(Резюме)

Ованес Саркаваг Имастасер (XI—XII вв.), выдающийся средневековый армянский философ, оставил богатое литературное наследие. Однако до сих пор учеными-арменоведами еще не выявлены все работы, достоверно принадлежащие Саркавагу. На основе тщательного изучения сведений о личности и научной деятельности Ованеса, а также рукописного фонда Матенадарана им. Маштоца мы приходим к выводу, что Саркавагу принадлежат еще два труда; один из них имеет богословско-философский характер, а другой содержит систематическое изложение учения о четырех элементах. На основе сравнительного анализа устанавливается, что в первой работе,—«Толкование труда Богослова Саркавагом» (рук. № 5596, стр. 98б—211б), армянский мыслитель комментирует речь одного из отцов восточной христианской церкви Григория Богослова «О рождестве Христовом».

Вторая работа, «Об элементах» (рук. № 6017, стр. 193б—196б), представляет большую теоретическую ценность не только в аспекте исследования натурфилософских воззрений Саркавага, но и для всей средневековой армянской философии. В статье дается также анализ натурфилософских воззрений Саркавага, в частности учения о четырех элементах.

33 «Նեմեսիոսի փիլիսոփայի նմեսացոյ յազազս բնութեան մարդոյ», էջ 64:

34 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձև. N° 6017, էջ 194ր:

35 Ա. Սուբրյանը, անդրադառնալով Նեմեսիոսի երկի հայերեն թարգմանությանը, մատնացույց է անում, որ «ոճն յունարան է և շատ տեղ անիմանալի» («Բաղմամբկ», 1880, էջ 326): Հետևելով նրան Հ. Տաշյանը նշում է նույնպես, որ թարգմանիչը կարծել է, թե ամենահարմար միջոցը երկու լեզուն ձուլելն է. «հայր բոլորովին լուսարեւի համեմատ, եւ գրեթէ խօսիլ հայրապետի յոյն լեզու մը» («Մատենադարանի մանր ուսումնասիրութիւնը», Վրեննա, 1895, մասն Ա, էջ 15):